# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) հայտարարում է Աշխատակազմի ֆինանսական վարչության փորձագետ ներգրավելու համար**

Փորձագետը ներգրավվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերի փոփոխությունների և Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքներում մասնակցային բյուջետավորման գործընթացի, մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի փաստաթղթերի ուսումնասիրության և համապատասխան եզրակացությունների տրամադրման աշխատանքների հետ կապված գործառույթներ իրականացնելու նպատակով:

Աշխատանքային պարտականություններն են՝

ա. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքներում Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 1890-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգերով՝ համայնքներում 2025 թվականին մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացում,

բ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի փաստաթղթերի ուսումնասիրության և համապատասխան եզրակացությունների տրամադրման աշխատանքների իրականացում,

գ. իրավական ակտերի վերաբերյալ եզրակացությունների ներկայացում:

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

«Տնտեսագիտություն» ենթաոլորտի բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ֆինանսավարկային կամ տնտեսագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, ինչպես նաև իրավական ակտերի մշակման փորձառություն:

Փորձագետը ներգրավվում է 2 /երկու/ ամիս ժամկետով՝ 2025 թվականի փետրվարի 10-ից մինչև 2025 թվականի ապրիլի 10-ը:

Աշխատավարձը 267072 /երկու հարյուր վաթսունյոթ հազար յոթանասուներկու/ ՀՀ դրամ:

**Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.**

* դիմում ՀՀ Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղարի անունով.
* տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(ների), վկայական(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ համապատասխան մարմնից/ներից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
* արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

* մեկ գունավոր լուսանկար 3Х4 սմ չափսի,
* անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը
* հայտարարություն՝ նշված սահմանափակումների բացակայության մասին.
- պաշտոնից ազատվել կամ ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու,
- օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու,
- օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու,
- «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

Ընտրությունը կատարվելու է դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով:
Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ, կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

Աշխատավայրը՝ ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2025թ. փետրվարի 7-ը ներառյալ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ /ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն, հեռախոս 0312 4-90-00-136/ էլեկտրոնային փոստի հասցեն՝ shirak.andznakazm@mta.gov.am):

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար Արսեն Աբրահամյանին

.....- ից
դիմողի անուն հայրանուն ազգանունը

.....
դիմողի հեռախոսի համարը

.....
էլեկտրոնային հասցեն

# ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կողմից հրապարակված հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ,
2. Դիպլոմի (դիպլոմների) _____ էջ,
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի _____ էջ,
4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) _____ էջ:

Առդիր՝ _____ էջ:

_____
(ստորագրություն, անունը, ազգանունը)

_____
(դիմումը ներկայացնելու ամսաթիվը)

Նախազգուշացված եմ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին: